ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
09 սեպտեմբերի 2025 թվական, N 131-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025 թվականի ծրագրի փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
3.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
4.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
5.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
6.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
7.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			

8.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
9.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
10.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
11.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
12.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
13.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈՎ			
14.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., սեպտեմբերի 09,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված ՀՀ Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու՝
09 սեպտեմբերի 2025 թվականի թիվ՝ 131-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Ծ Ր Ա Գ Ր Ի
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ.
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ 2025Թ

1. **Տեղեկատվություն համայնքի ազդակիր բնակավայրերի ու դրանց բնապահպանական կամ առողջապահական հիմնախնդիրների վերաբերյալ:**

Ալավերդին բազմաբնակավայր համայնք է, որի կազմում ընդգրկված են 3 քաղաքային և 26 գյուղական բնակավայրեր: Ալավերդի համայնքի խոշոր բնակավայրերը ձևավորվել են հանքարդյունաբերության շուրջ: Ալավերդի քաղաքում պղնձաձուլական գործարանը աշխատել է ավելի քան 250 տարի: Թեև այն վերջին տարիներին դադարեցրել է գործունեությունը, սակայն մինչ օրս առկա է գործարանի արտանետումների բացասական (անխուսափելի) ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա:

Այսօր էլ համայնքում գործում են հանքարդյունաբերական խոշոր ձեռնարկություններ՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանում ու վերամշակում, և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը և զբաղվում հանքանյութի մշակմամբ: Այս ձեռնարկությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունն արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական ջրերի արտահոսքը, մարդու առողջության համար վտանգավոր գազերի ու փոշու արտանետումներն օդային ավազան և վտանգավոր նյութերի արտահոսքը: Այս ազդեցության անմիջական կրողները Թեղուտ, Շնող, Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում և Ճոճկան ազդակիր բնակավայրերի բնակիչներն են ու շրջակա միջավայրը:

Հանքավայրերի երկարամյա շահագործումը, խոշոր պոչամբարների առկայությունը, խոշոր բեռնատարների երթևեությամբ ծանրաբեռնված համայնքի միջով անցնող միջպետական ավտոճանապարհը, տարածքի անտառների ժամանակին իրականացված հատումները համայնքի բնակչության առողջության, օդի աղտոտվածության և բնության վրա ունեն էական բացասական ազդեցություն:

2. **Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները:**

Բնապահպանական

Շնող բնակավայրում, ոռոգման ջրագծերի անմխիթար վիճակով պայմանավորված, տարեցտարի ավելանում են չմշակվող հողատարածությունները, ինչն անվերականգնելի վնաս է հասցնում շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը: Մասնավորապես՝ վերանում են կանաչապատ տարածքները, չորանում այգիները, արդյունքում՝ ավելանում են տափաստանների վերածվող ամայի տարածությունները, փոշու քանակը և բարձրանում է օդի աղտոտվածության մակարդակը:

Վերջին տարիներին Շնող և Թեղուտ բնակավայրերի ոռոգելի հողատարածքներում իրականացվում է այգեհիմնման ծրագիր, որի շրջանակում մինչ օրս հիմնվել և մշակվում է 159 հա պտղատու այգի: Այս բնապահպանական և գյուղատնտեսական

ծրագրի արդյունքների պահպանման և արդյունավետ շարունակականության ապահովմանը խանգարում է Շնող բնակավայրի շուրջ 405 հա տարածքում ոռոգման ցանցի գերմաշվածությունը, որոշ տեղերում՝ դրանց բացակայությունը:

Առկա ոռոգման ցանցերի մաշվածության, ինչպես նաև սխալ ջրաբաշխման պատճառով ոռոգելի չեն նաև Շնող բնակավայրի գրեթե բոլոր տնամերձ հողատարածքները, որի պատճառով չորանում են պտղատու ծառերը՝ առաջ բերելով և՛ գյուղատնտեսական, և՛ բնապահպանական խնդիրներ: Ոռոգման ջրի խնդրի պատճառով բնակիչների մի մասը նախընտրում են տնամերձերը ոռոգել խմելու ջրով, որը, սակայն, երկակի խնդիր է առաջացնում. գյուղատնտեսական՝ խմելու ջրի քլորացված լինելու տեսակետից և բնապահպանական՝ խմելու ջրի պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտության տեսակետից:

Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ, ենթակետերի (մթնոլորտային օդի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, հողերի դեգրադացիայի կանխման, բնակավայրերի կանաչ գոտիների պահպանման, վերականգնման, բարելավման միջոցառումներ) համաձայն, անհրաժեշտ է Շնող բնակավայրում կառուցել նոր ջրագիծ:

Առողջապահական

Համայնքի ազդակիր Մեծ Այրում բնակավայրում չկան հանգստի գոտիներ և մարզահրապարակներ, ինչով պայմանավորված՝ բնակիչների սպորտով զբաղվելու և ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորություն և մատչելիություն չի ապահովվում: Միևնույն ժամանակ բնակավայրում կան տարածքներ, որոնց անբարեկարգ վիճակը բացասական ազդեցություն է ունենում նաև մթնոլորտային օդի մաքրության և պահպանման վրա:

Ներկայիս վիճակը շտկելու, մթնոլորտային օդը մաքուր պահելու, բնակիչների առողջության պահպանման, ամրապնդման, առողջ ապրելակերպի խթանման նպատակով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 6-րդ և 11-րդ ենթակետերի (մթնոլորտային օդի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, բնակավայրերի կանաչ գոտիների պահպանման, վերականգնման, բարելավման միջոցառումներ, առողջ ապրելակերպի խթանում, վարքագծային գործոնների ձևավորում, առողջ ապրելակերպի ձևավորմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ) համաձայն, նպատակահարմար է բնակավայրի այդ տարածում կառուցել մարզահրապարակ/հանգստի գոտի:

Համայնքի Թեղուտ գյուղական բնակավայրում գործում է «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի մասնաճյուղը՝ ԲՄԿ-ն, որը միջին բժշկական օգնություն է մատուցում գյուղի ավելի քան 800 բնակիչների: ԲՄԿ-ի շենքն աղյուսապատ վագոն-տնակ է, որը անմխիթար վիճակում է: Գարնանային անձրևների ժամանակ անձրևաջրերը գրեթե անարգել լցվել են շինություն, որի պատճառով վնասվել է

բժշկական հաստատության գույքը: Նման պայմաններում բժշկական ծառայությունների մատուցումը դառնում է գրեթե անհնարին: Խնդրի լուծման համար «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 10-րդ ենթակետի (բնակչության առողջական վիճակիզննության կազմակերպում և իրականացում, դրանց իրականացման համար անհրաժեշտ համակարգերով ու սարքավորումներով բժշկական կենտրոնների վերազինում) համաձայն, անհրաժեշտ է վերակառուցել և անհրաժեշտ գույքով վերազինել «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի Թեղուտի մասնաճյուղը:

3. Ծրագրի նպատակը, խնդիրները, ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները (կարճաժամկետ և երկարաժամկետ)

Ծրագրի նպատակներն են՝

Բնապահպանական

- Կանաչապատ տարածքների ընդլայնում:
- Մթնոլորտային օդի մաքրության պահպանություն:
- Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար:
- Ջրային ռեսուրսների պահպանություն և արդյունավետ ու նպատակային օգտագործում:
- Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում:

Առողջապահական

- Առողջ ապրելակերպի խթանում:
- Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար:
- Մթնոլորտային օդի մաքրության պահպանություն:
- Թեղուտ գյուղական բնակավայրի բնակչությանը մատուցվող բժշկական օգնության ծառայությունների մակարդակի բարձրացում:

Ծրագրի խնդիրներն են՝

Բնապահպանական

- Կանխել Շնող գետի ջրի շուրջ 50%-ի կորուստը:
- Կանխել Շնող բնակավայրի շուրջ 405 հա հողերի տափաստանացումը:
- Նպաստավոր պայմաններ ստեղծել Շնող բնակավայրում այգեհիմնման բնապահպանական և գյուղատնտեսական ծրագրի իրականացման համար:

Առողջապահական

- Ապահովել համայնքային առողջապահական համակարգի հզորությունների ուժեղացում:
- Ապահովել առողջ ապրելակերպի և վարքագծային գործոնների ձևավորում:

- Ապահովել մթնոլորտային օդի պահպանությունը, օդի որակի բարելավումը, նվազեցնել օդի աղտոտվածությունը:

Ծրագրի իրականացումից ակնկալվող կարճաժամկետ արդյունքներն են՝

Բնապահպանական

- Տնամերձերը ոռոգելու համար խմելու ջուր չի օգտագործվում:
- Կանխվել է Շնող գետից միացված ոռոգման ջրագծերից ջրի կորուստը:

Առողջապահական

- Բարելավվել է Թեղուտ գյուղական բնակավայրի բնակչությանը մատուցվող միջին բուժօգնության և բուժսպասարկման մակարդակը:
- Առողջ ապրելակերպի համար ստեղծվել են պայմաններ:
- Համայնքում սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար ապահովվել է ֆիզիկական դաստիարակության ու ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մատչելիություն:
- Ստեղծվել է բարեկարգ համայնքային միջավայր:

Ծրագրի իրականացումից ակնկալվող երկարաժամկետ արդյունքներն են՝

Բնապահպանական

- Շնող ազդակիր բնակավայրում պահպանվում և ընդլայնվում են կանաչապատ տարածքները՝ այգիները:
- Հողերի տափաստանացման գործընթացի կանխարգելում:
- Մթնոլորտային օդում փոշու և մեքենաների արտանետումների պատճառով օդի աղտոտվածության խտության նվազում:
- Գյուղատնտեսության զարգացում, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

Առողջապահական

- Թեղուտ գյուղական բնակավայրի բնակիչների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակի բարձրացում:
- Նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի և ժամանցի համար:
- Մթնոլորտային օդում փոշու և մեքենաների արտանետումների արդյունքում օդի աղտոտվածության խտության նվազում:

4. Ծրագրի կատարողականի կանխատեսումը (քանակական և որակական ցուցանիշներ՝ ըստ առանձին միջոցառումների):

Բնապահպանական

- «Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցում, միջոցառում
  - *Շնող ազդակիր բնակավայրում կկառուցվի շուրջ 4.08 կմ երկարությամբ ոռոգման ջրագիծ, որը նպաստավոր պայմաններ կստեղծի կանաչապատ տարածքների ընդլայնման համար: Ծրագրով նախատեսված կառուցվելիք ոռոգման ջրամատակարարման համակարգերը սեփականության իրավունքով պատկանելու են Ալավերդի համայնքին: Կառուցվելիք ոռոգման ջրագծերը սպասարկելու է Ալավերդու համայնքապետարանը՝ «Ալավերդու բարեկարգում» համայնքապատկան ոչ առևտրային կազմակերպության միջոցով:*
  - *Շնող ազդակիր բնակավայրում 405 հա գյուղատնտեսական նշանակության հողերը, որի շուրջ 90 տոկոսը բնակավայրի բնակիչների, իսկ 10 տոկոսը Ալավերդի համայնքի սեփականությունն է, կդառնան ոռոգելի: Արդյունքում՝ շարունակական կդառնա ՀՀ բնապահպանության նախարարի ու ՀՀ գյուղատնտեսության նախարարի համատեղ հրամանի համաձայն իրականացվող կանաչապատ տարածքների ընդլայնման՝ պտղատու այգիների հիմնման բնապահպանական ծրագիրը, որի շնորհիվ կընդլայնվեն կանաչապատ տարածքները, կխուսափենք այդ հողերի տափաստանացումից և դրա արդյունքում նաև օդում փոշու քանակի ավելացումից:*

Առողջապահական

- «Ալավերդի համայնքի Մեծ Այրում բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցում» միջոցառում
  - *Մեծ Այրում բնակավայրում կունենանք 729.1 մ² մարզահրապարակ/հանգստի գոտի, որի արդյունքում բնակիչները ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու և առողջ ապրելակերպ վարելու հնարավորություն կունենան:*
- «Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի Թեղուտի մասնաճյուղի՝ ԲՄԿ-ի վերակառուցում և անհրաժեշտ գույքով վերազինում» միջոցառում
  - *Թեղուտ ազդակիր բնակավայրում կվերակառուցվի 56.74 մ² տարածքով բուժամբուլատորիայի մասնաճյուղը, որտեղ միջին բուժօգնություն և բուժսպասարկում կստանան գյուղական բնակավայրի 813 բնակիչները:*

5. Տեղեկատվություն Ծրագրի շահառուների վերաբերյալ:

Բնապահպանական

Ծրագրի «Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցում» միջոցառման ուղղակի շահառուները Շնող բնակավայրի բնակիչներն են՝ թվով 2923 մարդ, ովքեր ջրագծերի կառուցման և նորոգման արդյունքում լուծվող բնապահպանական, առողջապահական և գյուղատնտեսական խնդիրների անմիջական կրողներն են:

Առողջապահական

Ծրագրի «Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի Թեղուտի մասնաճյուղի՝ ԲՄԿ-ի վերակառուցում և անհրաժեշտ գույքով վերազինում» միջոցառման շահառուները Թեղուտ բնակավայրի թվով 813 բնակիչներն են, ովքեր օգտվում են ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող բժշկական ծառայություններից:

Ծրագրի «Ալավերդի համայնքի Մեծ Այրում բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցում» միջոցառման ուղղակի շահառուները մեծ Այրում բնակավայրի բնակիչներն են՝ թվով 713 մարդ, ովքեր ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, մաքուր մթնոլորտային օդում լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն կունենան:

6. Կապը տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտներում համայնքի առաջնահերթություններից բխող առաջարկությունների հետ,

Բնապահպանական

Ծրագրի «Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցում» միջոցառման իրականացումը բխում է Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրից, քանի որ հնգամյա զարգացման ծրագրի «համայնքի զարգացման անմիջական նպատակներ» ենթաբաժնում որպես նպատակ սահմանվել է ոռոգման ջրագծերի նորոգման և նորերի կառուցման նպատակը: Նույն ծրագրի «Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն» ենթաբաժնում որպես համայնքի սպառնալիք սահմանվել են բնապահպանական խնդիրները, իսկ որպես թույլ կողմ սահմանվել է գյուղական բնակավայրերում ոռոգման ներքին ցանցի անբարեկարգ վիճակը/բացակայությունը:

Միևնույն ժամանակ համայնքի նախաձեռնությամբ և ՀՀ բնապահպանության նախարարի ու ՀՀ գյուղատնտեսության նախարարի համատեղ հրամանի համաձայն Շնող և Թեղուտ բնակավայրերում տարիներ շարունակ իրականացվում է պտղատու այգիների հիմնման բնապահպանական ծրագիր, որի շարունակականության և

իրականացված աշխատանքների արդյունավետության ապահովումն անհնար է առանց ոռոգման ջրագծերի նորոգման և նոր ջրագծերի կառուցման:

Առողջապահական

Ծրագրի «Ալավերդի համայնքի Մեծ Այրում բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցում» միջոցառման իրականացումը բխում է Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրից, քանի որ հնգամյա զարգացման ծրագրի «համայնքի զարգացման անմիջական նպատակներ» ենթաբաժնում որպես նպատակ սահմանվել է «ապահովել համայնքի բարեկարգ տեսքը՝ խաղադաշտեր, խաղահրապարակներ, մարզահրապարակներ ու հանգստի գոտիներ նորոգելով և հիմնելով» նպատակը:

Ծրագրի «Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի Թեղուտի մասնաճյուղի՝ ԲՄԿ-ի վերակառուցում և անհրաժեշտ գույքով վերազինում» միջոցառման իրականացումը բխում է Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրից, քանի որ հնգամյա զարգացման ծրագրում որպես «բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծում» խնդրի լուծում նշված է առողջապահական ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգման ծրագիրը:

Միևնույն ժամանակ, սոցիալական ներառումը և դրա շրջանակներում որակով առողջապահության հասանելիության ապահովումը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության գերակա ոլորտներից է:

7. **Տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացմանը պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) մասնակցության վերաբերյալ:**

Ծրագրի կազմման փուլում պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների կողմից Ծրագրի իրականացման մասնակցություն չի նախատեսվում:

8. **Տեղեկատվություն Ծրագրի համաֆինանսավորման վերաբերյալ (առկայության դեպքում):**

Բնապահպանական

Ծրագրի «Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցում» միջոցառում:

Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքների իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի

ձեռք բերման ծախսերը կհամաֆինանսավորվեն Ալավերդու համայնքապետարանի կողմից:

Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքները նախատեսում է իրականացնել 2 փուլով: Առաջին փուլը կֆինանսավորվի «Ալավերդի համայնքի 2025թ. շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» ծրագրի շրջանակում, իսկ երկրորդ փուլը՝ կհամաֆինանսավորվի Ալավերդու համայնքապետարանի կողմից:

9. **Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի պատճենները կամ տեղեկատվություն դրանց ստացման ուղղությամբ իրականացվող կամ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:**

Ծրագրով նախատեսվում է կառուցել ոռոգման ջրագծեր, կառուցել մարզահրապարակ/հանգստի գոտի և հիմնանորոգել «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի թեղուտի մասնաճյուղի շենքը, ինչի համար Ալավերդու համայնքապետարանը պետք է տրամադրի նախագծման թույլտվություն, ապա, մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը՝ շինթույլտվություն: ՀՀ Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Ալավերդու համայնքապետարանը կտրամադրի համապատասխան թույլտվությունները:

10. **Ծրագրի միջոցառումների իրականացման առաջնայնությունները:**

Կցվում է՝ Հավելված 1:

11. **Ծրագրի արժեքը (ըստ միջոցառումների):**

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը 169105710 ՀՀ դրամ է, որը կիրականացվի ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարից: Որից՝

- Ծրագրի «Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցում» միջոցառման իրականացման համար (ներառյալ հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայություն)՝ 126905710 ՀՀ դրամ (ծավալաթերթ-նախահաշիվը կցվում է):
- Ծրագրի «Ալավերդի համայնքի Մեծ Այրում բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցում» միջոցառման իրականացման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում՝ 720000 ՀՀ դրամ, մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցման աշխատանքներ (ներառյալ հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայություն)՝ 25000000 ՀՀ դրամ (նախնական նախահաշիվը կցվում է):

- Ծրագրի «Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի Թեղուտի մասնաճյուղի՝ ԲՄԿ-ի վերակառուցում և անհրաժեշտ գույքով վերազինում» միջոցառման իրականացման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում՝ 480000 ՀՀ դրամ, վերակառուցման և անհրաժեշտ գույքով վերազինման աշխատանքներ (ներառյալ հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայություն)՝ 16000000 ՀՀ դրամ (նախնական նախահաշիվը կցվում է):

Ծրագրի իրականացման հիմքերը

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի 2023թ. սեպտեմբերի 4-ի N 310-Ն հրամանի, «Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի N 1421-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի (Հոդված 12՝ Համայնքի պարտադիր խնդիրները) պահանջներին համապատասխան:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Karine Simonyan 07.08.25, 09:26
Առաջնահերթություններ.docx · 15.4 KB

Հավելված

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN Ը/Կ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄ (հազ. դ
1.	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ**	**126,9**
1.1.	Ալավերդի համայնքի Շնող բնակավայրում ոռոգման ջրագծերի կառուցում	126.90
2.	**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ**	**42,20**
2.1.	Ալավերդի համայնքի Մեծ Այրում բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցում	25,00
2.2.	Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈՒԱԿ-ի թեղուտի մասնաճյուղի՝ ԲՄԿ-ի վերակառուցում և անհրաժեշտ գույքով վերազինում	16,00
2.3.	Նախագծա-նախահաշվային աշխատանքներ	1,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**169,1**

Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյան

Страница 1 из 1 Количество слов Масштаб 100%
Реклама
Woodex – раздел «Мебельные комплектующие и фурнитура»
Представьте вашу продукцию в целевом разделе «Мебельные